չենք նայում լաւատեսութեամբ։ Մենք տեսնում ենք այն ներքին քայքայումը, ներքին միութեան բացակայութիւնը, որն, անկասկած, արդելք է հանդիսանում պատերազմական գործողութիւնների բարեյաջող ընթացքին։ Մենշևիկների ներկայացուցիչ քաղաքացի Ծերեթելին մատնանշեց, նոյնպէս, որ այս պատերազմում մենք կարող ենք յաղթել միայն, եթէ լինենք բոլորովին միացած ու համերաշխ։ Մենք կասկածում ենք, որ կարելի կը լինի հասնել այդպիսի միութեան, եթէ սկսեն պատերազմական գործողութիւնները»։

Ուրիշ խօսքով, մահմեդականութեան ներկայացուցիչները բարձրաձայն յայտարարում էին, որ իրենք հակառակ են պատերազմին Թիւրքերի դէմ և որ չեն երաշխաւորում մահմեդական զանգուածների համակրանքն ու աջակցութիւնը պատերազմի դէպքում։ Ճիշտ է, իրենց առաջարկած բանաձեւի մէջ նրանք խոստանում էին «բոլոր մատչելի միջոցներով ցոյց տալ հնարաւոր օժանդակութիւն միւս ժողովուրդներին», բայց այդ սոսկ տուրք էր ճարտասանութեան։ Յետագայ դէպքերը հաստատեցին, որ Ռուստամբէգովի յայտարարութիւնն աւելի անկեղծ էր և աւելի համապատասխան իրերի վիճակին։

Այնուամենայնիւ, ռազմաշունչ ճառերը չարունակւեցին։ Նոյն ոգով խօսեցին և Զուղելին, Ժորդանիան, Լորդկիպանիձէն, Սեմեոնովը։ Մ. Յարութիւնեանը յանուն Դաշնակցութեան յայտարարեց, որ «մենք և բոլոր այն զանգուածները, որոնք իրենց քէն աւել են մեզ, ես կարող եմ ասել աւելին՝ ամբողջ հայ ժողովուրդը համոզուած է, որ իրեն համար չկայ ուրիշ փրկութիւն, քան այս մարտահրաւէրն ընդունելը և դէնքը ձեռքին ճակատ մեկնելը՝ հայրենի հողը պաշտպանելու համար։ Մենք համոզուած ենք, որ այս միակ ճանապարհն է, որը կարող է փրկել մեր ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը։ Մենք հաւատացած ենք, որ ժողովրդի միակ փրկութիւնը դէնքի մէջ է... Մենք կը չարունակենք պայքարը Թիւրքիայի դէմ, որովհետև մեզ համար դէնքից բացի ուրիշ փրկութիւն գոյութիւն չունի»...

Ռուստամբէգովից յետոյ ամենից անկեղծ և իր ժողովրդի տրամադրութիւնները ճիշտ արտայայտող պատգամաւորը, այդ օր, անշուշտ, Մ. Յարութիւնեանն էր։ Եւ հայ ժողովուրդը, որ յուսահատական կռիւ էր մղում Վեհիբ փաշայի զօրքերի դէմ, կենդանի ապացոյց էր Դաշնակցութեան յայտարարութեան ճշմարտութեան Սէյմում։

Ի վերջոյ, բուռն վէճերից յետոյ, Սէյմը միաձայնութեամբ ընդունեց Ժորդանիայի առաջարկած բանաձեւը սոց.-դեմ. Ֆրակցիայի կողմից. «Որովհետեւ Թիւրքիայի և Անդրկովկասի միջև չի կայացել խաղաղ հաշտութիւն Անդրկովկասի սահմանների մասին, անդրկովկասեան պատուիրակութեան առաջարկւում է անյապաղ մեկնել Թիֆլիս»։ Այս բանաձեւն էր, որ ուղարկուեց Տրապիզոն պատուիրակութեան։

Այդ Ժորդանիան բացատրեց, որ այս որոշումով «մենք, ուրեմն, պաշտօնապէս մտնում ենք պատերազմի ասպարէզ, այսինքն՝ Անդրկովկասը պատերազմ է վարում Թիւրքիայի հետ։ Այդ պատճառով, Սէյմը պէտք է երկրում զինուորական վիճակ յայտարարէ»։ Բէյարկութեամբ և նոյնպէս միաձայն ընդունուեց այս առաջարկն էլ։ Միաձայնութեամբ հաստատուեց Ժորդանիայի և երրորդ առաջարկը՝ կազմել արտակարգ լիազօրութիւններով